600.0413.06.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 նոյեմբերի 2019 թվականի №413Ա
քաղ. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի վերաբերյալ 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների տեղեկատվությունների վերլուծության արդյունքները.

բ) որ 2019 թվականի սեպտեմբերի 17-ից Հանձնաժողովի կողմից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 16-րդ, 19-րդ, 24.2-րդ և 24.4-րդ կետերով սահմանված ժամկետների խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով, որի ժամկետը 2 անգամ 10-ական օրով երկարաձգվել է.

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից սեպտեմբերի 27-ի №ՄՇ/25035 և հոկտեմբերի 8-ի №ՄՇ/25946 գրություններով ներկայացված պարզաբանումները, որոնց համաձայն 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների ընթացքում Կանոնների 16-րդ, 19-րդ, 24.2-րդ և 24.4-րդ կետերով սահմանված ժամկետների խախտման հիմնական պատճառ են հանդիսացել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվությունների տրամադրման ժամկետների խախտումները և այն, որ նոր համակարգերի կառուցման

աշխատանքները ներառված են եղել նախորդ ջրամատակարար ընկերության գործունեության ժամանակահատվածում իրականացված ներդրումային ծրագրերում, ուստի նշված հասցեներում ջրագծի կառուցման, ջրաչափական հորի տեղադրման աշխատանքները պետք է իրականացվեն կամ իրականացվել են նշված ծրագրերի շրջանակում և Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման տեխնիկական պայմաններ կամ միացման պայմանագիր տրամադրելու անհրաժեշտություն չի եղել, իսկ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի ժամկետները երկարաձգվել են դիմող անձանց հետ կնքված լրացուցիչ համաձայնագրերով, միևնույն ժամանակ ներկայացվել են ժամանակավոր պայմանագիր կնքելու համար դիմող անձանց՝ ապօրինի ջրօգտագործման վերաբերյալ արձանագրության մասին ծանուցման ժամկետը հիմնավորող փաստաթղթեր.

դ) Կանոնների 16-րդ կետը, համաձայն որի՝ դիմումն ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը դիմող անձին է ներկայացնում տեխնիկական պայմաններ՝ դիմող անձի կողմից նոր համակարգի կառուցման դեպքում, կամ միակողմանի կնքված միացման պայմանագիր՝ Ընկերության կողմից նոր համակարգի կառուցման դեպքում.

ե) Կանոնների 19-րդ կետը, համաձայն որի՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից մինչև Ընկերության կողմից դիմող անձին ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամանակահատվածը չի կարող գերազանցել 60 աշխատանքային օրը.

զ) Կանոնների 24.2-րդ և 24.3-րդ կետերը, որոնց համաձայն՝ ժամանակավոր պայմանագիր կնքելու նպատակով մատակարարի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի N 658-Ն որոշման համաձայն կազմված արձանագրության վերաբերյալ պատշաճ ծանուցվելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ժամանակավոր բաժանորդը, նոր միացման և ժամանակավոր պայմանագիր կնքելու համար, Կանոններով սահմանված կարգով Ընկերություն է ներկայացնում դիմում՝ կցելով նաև խմելու ջրի ապօրինի սպառման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործման դիմաց սույն կետում նշված որոշման համաձայն հաշվարկված գումարի վճարումը հավաստող փաստաթղթի կամ Ընկերության հետ կազմված վճարման

ժամանակացույցի պատճենը, իսկ սույն կետում նշված ժամկետի ավարտից հետո դիմումը ներկայացնելու դեպքում Ընկերությունը մերժում է ժամանակավոր պայմանագրի կնքումը.

է) Կանոնների 24.4-րդ կետը, համաձայն որի՝ Կանոնների 24.2-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը արտաքին զննության է ենթարկում Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին ապօրինի միացումը, ապօրինի միացման կետում տեղակայում է առնտրային հաշվառքի սարք, որի տրամագիծը չի կարող գերազանցել 15 մմ-ն, և ժամանակավոր բաժանորդին ներկայացնում է ժամանակավոր պայմանագիր կնքելու առաջարկ.

ը) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների ընթացքում 85 դեպքում խախտել է Կանոնների 16-րդ, 19-րդ, 24.3-րդ և 24.4-րդ կետերը՝ դիմող անձանց միացման պայմանագիր, տեխնիկական պայմաններ կամ ժամանակավոր պայմանագիր, ինչպես նաև ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելով և ժամանակավոր պայմանագրի կնքման համար դիմումներ ընդունելով Կանոններով սահմանված ժամկետի խախտմամբ: Ինչ վերաբերում է Ընկերության հիմնավորումներին, ապա անկախ այն հանգամանքից, որ դիմող անձանց նոր համակարգերի կառուցման աշխատանքներն իրականացվել են կամ պետք է իրականացվեն նախորդ ջրամատակարարի գործունեության ժամանակահատվածում, նոր համակարգերի միացումն Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին անհրաժեշտ է իրականացնել Կանոններով սահմանված կարգով՝ դիմող անձանց տրամադրելով տեխնիկական պայմաններ կամ միացման պայմանագիր, իսկ ծառայությունների մատուցման պայմանագրերով սահմանված ժամկետները երկարաձգելու մասին լրացուցիչ համաձայնագրերը կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու Կանոններով սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց հետո, ուստի դրանք Կանոնների 16-րդ, 19-րդ, 24.3-րդ և 24.4-րդ կետերով սահմանված ժամկետի խախտման հիմնավորման օբյեկտիվ պատճառ հանդիսանալ չեն կարող.

թ) որ Հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 4-ի №109Ա, օգոստոսի 22-ի №333Ա, նոյեմբերի 21-ի №430Ա և 2019 թվականի փետրվարի 6-ի №19Ա որոշումներով

Ընկերությունն արդեն իսկ Կանոնների 16-րդ, 19-րդ, և 19.1-րդ կետերի խախտման համար չորս անգամ, որոնցից երեքն առավելագույն չափով, ենթարկվել է տուժանքի, ուստի համաչափ է Ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված տուգանքի առավելագույն չափի կիրառումը,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 16-րդ, 19-րդ, 24.2-րդ, 24.3-րդ և 24.4-րդ կետերը խախտելու համար Ընկերությանը տուգանել՝ 10 000 000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը №900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
6 նոյեմբերի 2019թ.